

ԲԱԺԱՆՈՐ ԴԱԳԻՆ

Պոլիարից համար


Տարեկան ֆրք 10

Վեցամսեայ " 5

ԿԱՆԻԻԿ

20

ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐ ԴԱԳԻՆ

Արտասահման

Տարեկան ֆրք 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻԻԿ

20

ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հարաք օրերը: Մա-
նուցման տողը 10 Սանդիմ: Երկու քիւ ա-
ռաջ հրատարակուած քերթը 40 Սանդիմ:
Զհրատարակուած գրուքիւնը եւ յտրուիր:

Հասցէ
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՄԸ

Գահիրէէն մարտ 29 թուով գըր-
ուած նամակէ մը կը տեղեկանանք թէ,
տեղւոյն Գաւառական Ընդհանուր Ժո-
ղով գումարուելով, Առաջնորդի ընտ-
րութեանը ձեռնարկեր է, բայց ժողո-
վականաց իրարու լեզուէ չի հասկնալ-
նուն պատճառաւ եզրիպտոսի ժողովու-
րը դարձեալ անառաջնորդ մնացեր է,
որովհետեւ վիճաբանութիւնք Հայերէն,
Փրանսերէն, Տաճկերէն ու Արաբերէն
լեզուներով եղեր են. տարօրինակ նո-
րութիւն մը չէ՞ այս: Նոյն ժողովին
Բաբելոնական վիճաբանութեանցը վրայ
գազափար մը առնելու համար քանի մը
վայրկեան պէտք է ունենդիր հանդի-
սանանք:

Ատենայեալ — Ատենան բացուած
է տեա՛րք երեսփոխանք:

— Խօսք իսթէրիմ:

— Խօսք՝ խափակա Թախալթուխա-
նըն տըր:

— Առաջնորդ ինթիխապը իչիւն

Ընտրողական ժողովուն կէթիրմիշ օլ-
տուղու նամզէտ ճէտվէլինտէն տըշարը
պիր քիմնէյէ քուէ վէրմէյ: մէէզլուն
մըյըզ:

— Էյվա եա՛ սիյտի:

— Սանտուլթ մօնչէր ամի:

— Ճանըմ, սանթուրը հոս ի՞նչ բան
ունի, չալկըմը չալաճաըզ:

— Ասըը հէփիմիլ պիրէր թիւլիւ
հավա չալմայօրըզ:

— Կը փափագիմ իմանալ թէ ի՞նչ
պատճառաւ մէկ քանի անձանց քուէ-
թուլթ չէ՞ շրկուած. արդեօք այսօր
նիւթական նախանձեղի վիճակ մը չու-
նալնուն համար է:

— Էյվա՛ խափակա Կուլթիուլթ, պա-
տէն ֆանթաղիյա գըթիր՝ ֆիլիզ մաֆիշ:

— Մէ՛, իլֆօթիսի սըլօնլալուա
տօնէն լ՛օռ վօթ:

— Աղբար, Մարսիլեա՞ իսկէլէսին-
տէմիլիզ, պու նէ՞ տէմէք իսթէյօր:

— Այս բանը զեզժում մը չէ՞:

— Լա՛, լա՛, լա՛, բրօթէսթօ կընեմ:

— Է մուա օսի, ես ալ կը բողոքեմ:

Գպիր մը — Բարկանայք ե մի՛ ճընչ-
վուտէք առէ երանելի մարդարէն Գալիթ:

— Պի հագկըն հօւ խափակա Զուկ-

զուկ:

— Մէճլիստէ պու եօլտա հաղարէ-
թամիլ խօսքեր ըսելը տէգօնօռէ էտէր:

— Կը ձայնակցիմ:

— Վուղալէ ռէզօն խավալա Կըթ-
Կըթ:

— Անա միսկինա:

— Ասանկով կը կարծէ՞ք որ յաջո-
ղինք:

— Ժամէ՛, պիրատէր, երբէք:

— Քու էֆքեարդ ի՞նչ էր եա սիյ-
տի Մէրկէք:

— Եաղմա մաֆիշ խավակա Տիւրկէր:

Հարկ է ըսել թէ աշխօրինակ ժո-
ղովը չէնք շնորհք ժամկոչ մը չի կրնար
ընարել, ո՛ւր մնաց առաջնորդ:

Վառնաի մէջ իր մեռած եղբօր
կնոջը հետ ժամանակէ մը ի վեր ան-
վայել յարաբերութիւններ ունեցող մէ-
կը՝ Կ. Պոլսոյ Կրօնական ժողովին խնդ-
րագիր մը տալով, նոյն կնոջ հետ օրի-
նաւորապէս պսակուելու համար արտօ-
նութիւն ուղեր էր. անցեալ երեքշաբ-
թի օրը գումարուած Կրօն. ժողովը կ'ո-
րոյէ այդ մարդուն խնդրագիրն ան-
գամ նկատողութեան չառնուլ:

Հարսանիթի և փողատապի հիւան-
դութեանց սատկանալուն պատճառաւ,
քաղաքիս առողջապահական ժողովոյ ու-
րոշմամբ այս շաբթու ամեն ազգի վար-
ժարանները գոց էին:

Տեղւոյս Ազգային վարժարանի ման-
կապարտէզուհիներէն մէկուն դէմ ար-
ժանահաւատ անձերէ գանգատներ կը
հասնին մեզի. այդ օրիորդը երբեմն
տղայոց գլխուն բռնցի հարուածներ կ'ի-
ջեցնէ ու երբեմն ալ մատներինն ու չըր-
թունքնին կը ծակծկէ եղեր ասեղով:

Կրսեն նաև թէ այդ ծեծին պատճառաւ
ծնողք մը ստիպուեր է իր զաւակը վարժ-
ժարանէն հանել:

Առ այժմ այս տողերը վարժարանի
Տնօրէնութեան ուշադրութեանը կը
յանձնենք:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Առ . . . Խմբագրութիւն «Հայելի» հանդէսի.

Մի անգամ ընդ միշտ վերջ տալու հա-
մար այն անհիմն և ստայօգ տարաձայնու-
թիւններուն, որոնք ալձագանգ գտան նաև
ձեր թերթի նախորդ թիւերէն մէկուն մէջ
և որոնք բղխելով ոչ այնքան մաքուր աղ-
բիւրներէ, իրենց նպատակ ունին անուա-
նարկել տեղւոյս կրթական հաստատութիւն-
ները և տեսուչ Պր. Սապահ-Գիւլեանը, կը
փութանք յայտարարել թէ տեղւոյս վար-
ժարանները երբէք այնքան կանոնաւոր վի-
ճակ ունեցած չեն, որքան հիմա և թէ Պր.
տեսչին պաշտօնավարութենէն գոհ են տեղ-
ւոյս բոլոր պաշտօնական մարմինները, ինչ-
պէս և ամբողջ ժողովուրդը:

Այս բոլոր չարամիտ տարաձայնութիւն-
ներուն առիթ տուած է ուսուցչուհիի մը և
եկեղեցւոյ երաժշտին պաշտօնէ ար ձակումը,
իրողութիւն մը զոր կուզեն շահագործել կարգ
մը անձեր իրենց կիրքերուն յագուրդ տալու
համար:

Ճշմարտութիւնը վերականգնելու և ե-
ղելութիւնները իրենց իսկական գոյնովը ե-
րևան բերելու համար, հաճեցէք մեր ներ-
կայ գրութեան անկիւն մը յատկացնել Ձեր
թերթի մօտակայ թիւերէն մէկուն մ էջ:

Ի դիմաց Ռուսճուքի Ազգ. երկսեռ
վարժարաններու Հոգաբարձութեան
Ատենադպիր Ատենապետ
Թ. ՍԻՒՔԻԱՍԵԱՆ Մ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

ԿՆԻՔ

14 | 26 Ապրիլ 98
Ռուսճուք

Անցեալ շաբթու տեղւոյս Աղքատա-
խնամ ընկերութեան ընդհ. ժողովը չի
կրցաւ գումարիլ, որովհետեւ համարա-
տու գործադիր ժողովը մինակ ներկայ
էր, համարառու մարմինէն ոչ ոք, Հը-
րապարակաւ Աղքատախնամէն հաշիւ և
բացատրութիւն պահանջող նախանձա-
խնդիր(°) պարոններն ալ իրենց բացա-
կայութեամբը փայլեցան. զարմանալի
չէ՞ այս:

ՆՈՐ ՀԱՒԱՏԱԼԻՔ

Հաւատքով ի՞նչ ես.

— Յեղափոխական եմ. . . իմ հաւ-
նած կերպովս:

— Յեղափոխական բառը ի՞նչ կը նը-
շանակէ.

— Ինծի համար կը նշանակէ հրապա-
րակը տակնուվրայ ընել ու անկիւն մը բա-
շտելով նստիլ:

— Այդ տեսակ յեղափոխութիւնը ի՞նչ
պէս պաշտել պէտք է.

— Փորս կշտացուցած ատենը սիրուհիիս
պէս, իսկ անկուտի ձգած ատենը . . . զոն-
քանչիս պէս:

— Այդ յեղափոխութեան հաւատա-
լիքները ո՞ր գրուածքին մէջ կը գտնուին հա-
մուտաւ.

— Հանգանակին մէջ.

— Հանգանակը ո՞վ բերաւ մէյտան.

— Պրօպականտիզստները.

— Ո՞րն է այդ հանգանակը.

— Հաւատամքն է.

— Գոց գիտե՞ս,

— Գիտեմ: Հաւատամք ի մի չարքըն
յեղափոխութիւն, հայր ամեն երկպառակու-
թեանց. արգելիչն վաճառականութեան եւ
առևտուրի, արարիչն Պատրիարքարանի, Պա-
պը ալիի և Պանքայի ցոյցից, ստեղծիչն Հա-
յաստանի և Պոլսոյ կոտորածից, երևելի և
աներևոյթ առաւփախաւութեանց եւ շահատա-
կութեանց:

Հաւատամք և ի մի տէր Նազարբէկ,
որով ամենայն ինչ ապստամբութիւն եղև ՚ի
Սասուն, ՚ի Զէյթուն ՚ի Վեսարիա, ՚ի Տրա-
պիզոն, ՚ի Թաքադ, Զէնկիւրիւ և ի Բիւզան-
դիոն, երևելիք և աներևոյթ կոտորածք: Որ

յաղագս մեր հայկեան և փսն մերոյ հայ-
րենիքի փրկութեան իջեալ ՚ի Ռուսիայից, մար-
մնացաւ, մարդացաւ, գաղափարացաւ և հա-
րստացաւ կատարելապէս. որով էառ զմար-
մին, զհոգի եւ զհոգեմարմնս եւ զամենայն զոր
ինչ է ի խաշագողս, դիզել զոսկին և փառա-
ւորիլ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Խօսեալ
բարոյեալ, կախարհեալ, խաբեալ զմիմի-
տըս եւ զտգէտս, յերորդ աւուր արշտոյսին
առեալ զմատամն իւր փախեալ ՚ի լոնտոն և
նստաւ ընդ աջմէ թայմզ գետոյն:

Գալոց է նովին մարմնովն եւ փառօք
յեղափոխութեան, թուել զսթէպլինս եւ
զլիւրայս, զկենդանիս եւ զմեռեալս որոյ տի-
րապետութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ՚ի պաշը գըշը պէլլիսիզ
պիւռօյականսն, յանեղն եւ ՚ի կատարեալն,
որ խօսեցաւ ՚ի թուցիկ թերթս եւ կոնա-
կի վրայ բաց լրագիրս, որ էջն ՚ի ժողովուր-
դըս, բարոյեաց զպօմպայս եւ բնակեցաւ . . .
՚ի լօթանթայս եւ ՚ի պիրախանայս: Հաւա-
տամք եւ ՚ի միմիայն ընդհանրական եւ ժո-
ղովրդական շուարումն: Հաւատամք ՚ի մի
փորթուգալեան. մի Արիիարեան. մի Չա-
րազեան, մի Չաքրեան, մի Եռագլուխ տառ-
պէլլիսիզեան, մի Մարտ, մի Նոր կեանք, մի
Ցաւրոս, մի Փարոս, մի Իրաւունք, մի Հա-
յիլի, մի Շարժում, մի Գաղարում, մի Ար-
մէնիա եւ մի լԱռմէնի, մի Հնչակ եւ մի
Գրօշակ, որոց փսն մաղթենք ՚ի զգաստու-
թիւն, ՚ի լրջութիւն եւ ՚ի գիտակցութիւն
ըրածից եւ թողածից, ՚ի յարութիւն մեռե-
լոց, ՚ի դատաստանն տիպլօմթիայից, ար-
քայութիւնն անթութեանէ մեռնելու վրայ ե-
ղող ճշմարիտ հեթոսից եւ ՚ի կեանս երեւա-
կայեալս:

Իսկ որք ասենն էր երբեմն յորժամ ոչ
էր հնչակութիւն կամ էր երբեմն յորժամ ոչ
էր դաշնակցութիւնն, կամ թէ յոչէից եղեն,
կամ յալմէ աղգէ, զայնպիսիսն նզովեն
պատառաբոյժք եւ պնակալիզք յեղափոխու-
թեան:

Բոժոժիկ. — Իսկ մեք փառաւորեսցուք
որ յառաջ բան զյաւիտեանս երկիրպագանե-
լով միմիայն փառքի եւ դրամի, այժմ եւ միշտ և
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՄԱՂԱՂԿՈՒ ՍՆՏՈՒԿԸ

(Շար .)

Բ .

Այս նամակներու փոխանակուելէն տասը օր ետքը, տիկին Մաղթուհի երկրորդ նամակ մը կը ստանար Պ. Նինի-մուլէնէն որ իրեն եղած առաջարկին համակերպելու պատրաստ ըլլալն յայտելով, կը խոստանար դեղափորձութեամբ պարապելու, միանգամայն կը խնդրէր որ անմիջապէս անտուկը ճամբայ հանէ դէպ 'ի վառնա: Միւսնոյն ժամանակ վառնաի Ան բարեկամն ալ հեռագիր մը կը ստանար ֆիլիպէէն, ազգարարող որ նոյն օրերուն մէջ պէտք էր երթալ տեղւոյն երկաթուղիին կայարանը սպասել, ուր պիտի հասնէր անտուկը և մէկ երկու օր վերջն ալ տիկինը:

Առ այժմ թողունք որ պարոն Ան նոյն օրէն սկսեալ շաբաթ մը ամբողջ երկաթուղւոյն կայարանը երթայ գայ, անտուկը կամ տիկինը դիմաւորելու համար, մենք ընթերցողին հետ դառնանք 'ի Ռուսչուգ:

Տիկին Մաղթուհի սոյն երկրորդ նամակը կարգալէն ետքը, դիտու ցաւ ունեցողի մը պէս՝ ճակտին վրայ մէկ բանի կտոր քաթաթեղ կապեց, ու գաւաթ մը գինիի մէջ քիչ մը խառնելով այն փոշիէն՝ զոր Նինի-մուլէն ժամանակին իրեն տուած էր, (և որ ամուսինը 10-12 ժամ անընդհատ քնացնելու կը ծառայէր,) ի մի ումպ խմեց և անկողին մը տած պառկեցաւ: Անմիջապէս աչքերը ծանրացան ու սկսաւ քնանալ:

Երկու ժամ ետքը ժամացոյցը կէս օր կը զարնէր. ամուսինը, ըստ սովորութեան, ճաշելու համար տուն վերադարձաւ ու կինը նոյն վիճակին մէջ գտնելէն դող ելաւ, յետոյ կամացուկ մը մօտեցած՝ ուղեց զայն արթնցնել:

— Մաղթուհի . . . Մաղթուհի . . .

— . . .

— Մաղթուհիս . . .

— Ը՛ր՛ը՛ . . .

— Հիւանդ ես Մաղթուհի . . .

— Ը՛ր՛ը՛ . . .

— Կ'երևի թէ նորէն բռնեց այն գլուխացաւդ, ցոր հօս գալերնուս ի վեր մերթ ընդ մերթ զբեկ կը նեղէ:

Կարծեցեալ հիւանդը աչքերը կէս մը բացաւ և խեղդուկ ձայնով մը.

— Քիչ մը ջուր . . . ըսաւ:

Ամուսինը փութաց ջուրին գաւաթը առնոր շրթանցը մօտեցնել, միւսնոյն վայրկեանին հարցունելով.

— Բժիշկ մը կանչե՞մ Մաղթուհիս.

— Ո՛չ . . . բան մը չեմ ուզեր, միայն մայրիկս կուզեմ:

— . . .

— Մայրիկս կուզեմ, կիսանա՞ս.

— Մայրիկդ մի՛ . . .

— Այո՛, մայրիկս.

— Շատ աղէկ սիրելիս. բայց ներէ՛ ինձ հարցնել թէ արդեօք մայրիկդ բուժիչ դեղ մ'է և թէ հիմա զինքը ո՛ւր գտնելու է, մենք Ռուսչուգ ենք, ան ալ Պոլիս կը գրտնուի:

Տիկին Մաղթուհի այս պատասխանէն վշտացած՝ գլուխը անդին դարձուց, երկար հառաչք մը արձակելով:

— Օ՛հ, սիրելի կինս, կը յուսամ թէ քիչ մը ինքզինքդ գտար:

Տիկինը առանց պատասխանելու գլուխը ասդին դարձուց, աչքերը խոշոր մը բացաւ ու նորէն գոցեց:

— Ա՛հ, աչքերուդ մէջ արիւն է լեցուեր, սիրելիս, ալ չեմ տարակուսիր թէ գլխացաւը զբեկ շատ նեղած է. օգնե՛մ բեղի, սանկ, բազմոցին վրայ ելնել նստելու. վասն զի ատանկ պառկած վիճակի մէջ գլուխդ աւելի կը ծանրանայ:

— Տիկին Մաղթուհի փորձեց ելնել, ու վերջապէս ամուսինոյն օգնութեամբ բազմոցին անկիւնը գնաց նստեցաւ:

— Աւա՛ղ, որ չի կրցայ ցորեկուն համար քեզի կերակուր մը պատրաստել, ըսաւ հատկապէս ձայնով մը, ու թերեւ իրիկունն ալ . . .

— Հոգ չէ՛ սիրելի Մաղթուհիս, դուն աղէկ եղիր, ես կրնամ երկու խաշած հաւ-կիթով օրս անցունել, իրիկունն ալ ճաշա-քանէն քիչ մը կերակուր բերել կուտանք:

— Մինակ քեզի համար բերել տուր, ես չեմ կրնար ուտել. վասն զի ախորժակ չունիմ:

— Ուրեմն քեզի համար ալ քիչ մը մսի չուր բերել կուտամ:

— Չեմ ուզեր, բան մը չեմ ուզեր:

— Շատ աղէկ, թող այդպէս ըլլայ. հիմակու հիմա քու առողջութեանդ համար պէտք եղածին վրայ խորհինք: Ի՞նչ էր շար-ժառիթը որ գլխացաւդ բռնեց. մէկուն դէմ բարկացա՞ր ի՞նչ եղար:

— Ո՛չ, ո՛չ, որո՞ւ դէմ պիտի բարկա-նամ.

— Առտուն տունէն մեկնած ատենս բան մը չունէիր:

— Ճշմարիտ է. մտիկ ըրէ որ ըսեմ. քու մեկնելէդ գրեթէ մէկ ժամ ետքը վրաս թուրութիւն մը եկաւ ու գլուխս սկսաւ դառ-նալ, պարտաւորեցայ գլուխս սանկ քիչ մը վար գնել. բունս տարեր էր. երազիս մէջ տեսայ որ մայրս հիւանդ պառկած՝ սոսկալի կերպով կը տանջուէր, ու մէկը չի կար քո-վը. այս տեսարանին տպաւորութեանը տակ արթնցայ սաստիկ գլխու ցաւով մը:

— Խեղճ Մաղթուհիս.

— Ա՛հ, սիրելիս, գթա՛ ինձ, կուզեմ անգամ մը մայրիկս տեսնել ու կարօտս առ-նել. երկու տարի է որ բաժնուած եմ իրմէ. այնչափ մարդիկ վերադարձան իրենց ծնըն-դավայրը, մենք ինչո՞ւ տակաւին հոս կենանք:

— Աղէկ կըսես. սիրելի Մաղթուհիս, բայց դու գիտես թէ ունեցած արհեստս հոս աւելի շահաբեր է քան թէ ՚ի Պոլիս. եւ թէ, հոս վայելած հանգստութիւննիս Պոլսոյ մէջ չպիտի կրնանք գտնել. միթէ դուն չէ՞իր քանի մը անգամներ ըսողը թէ այս հանգըս-տութիւննիս չի խանգարելու համար պէտք է հոս մնանք:

— Բայց սիրելիս, բոլորովին Պոլիս

հաստատուինք չեմ ըսեր կոր, այցելութիւն մը տանք մայրիկիս, մէկ երկու ամիս. Մա-յիսը հոն կընենք ու նորէն կը վերադառ-նանք. ի՞նչ դժուարութիւն կայ:

— Բան չի կայ, իբր թէ գիմացի դը-րացիին տունը պիտի երթանք գանք:

— Գիտեմ թէ քիչ մը ծախք պիտի ըլլայ, բայց ի՞նչ օգուտ...

— Ծախքը հոգ չեմ ընել ես. միայն թէ, անանկ ատեն մը կուզես երթանք որ, ճիշդ այստեղի յաւանքներս տեսնէ. առուտուր ընելու ժամանակնիս՝ Պոլիս եր-թալով կուզես անցունել:

— Ուրեմն մինակ զիս շրկէ մայրիկիս, երկու ամիսէն կը վերադառնամ. այո՛, այո՛, պէտք է առանձին երթամ, եթէ ինձ ըն-կերանաս՝ թերեւս ուրիշներուն պէս բանտար-կուիս եւ կամ չի թողատրենքեղ հոս վերա-դառնալու. բայց եթէ մինակս երթամ, «Ա-մուսինս Ռուսճուգ կը բնակի, պէտք է ա-նոր մօտ դառնամ» ըսելով՝ կրնամ հրաման առնել. ասոր հարկւրաւոր օրինակները տե-սանք:

— Առ այժմ, սիրելի կինս, քու ա-ղէկնալուդ նայինք, այդ ամենը կարգի կը մտնէ:

— Բայց կը խոստանա՞ս գոնէ զիս շըր-կել:

— Կը խոստանամ, ըսաւ ամուսինը սիրտը նեղացած, բայց անտարբերութիւն կեղծելով՝ տունէն մեկնեցաւ:

Տիկին Մաղթուհի քանի մը վայրկեան մտածելէն ետքը՝ իր որոշումը, տուաւ. «Պէտք է մեկնիլ, ըսաւ ինքնիրենը, գլխացա-ւուս աւելի սաստկանալուն պատճառ չի տա-լու համար էր որ խոստացաւ, երբ առող-ջանամ, չպիտի թողու որ երթամ, ուրեմն պէտք է անպատճառ մեկնիմ»։ Ու անմիջա-պէս իրեն համար պէտք եղածները սնտու-կին մէջ տեղաւորելով, տանտիրոջ տղան կան-չեց, ձեւքը 10 ֆրանքնոց մը դրաւ ու ա-նոր միջոցաւ սնտուկը երկաթուղին կայարա-նը շրկեց:

Հետեւեալ օրը պարօն Ան, Վառնաի կա-
յարանէն կը ստանար գեղնագոյն անտուկը
եւ կառք մը զրաժ կը փոխադրէր իր տունը:
(Եւրոնակեցի)

ՁԵԿՈՅՑԲ



Առ Տ. Ս. Հ. Ֆէլէկեան ի Գահիրէ.
— Անցեալ տարի ձեր հեղինակած «Սա-
սուն և Զէյթուն» անուն գիրքը հրա-
տարակելու համար բաժանորդագրու-
թիւն մը բացած էիք, արդ, նոյն բա-
ժանորդագրութեան մասնակցելով կան-
խալճար ընողները կը պահանջեն որ
գիրքերը ընդ հուպ իրենց հասցէին
ղրկէք:

ՀԻ

Առ Տ. Ա. Ետան ի Փ. Պսլիա. — Յա-
ջորդ թերթով պիտի հրատարակենք ձեր
գրութիւնը, մեր պատասխանն ալ հետը:

Առ Օրիորդ կամ տիկին վարժուհի,
Լէթիէն կամ Ամազօնուհի միոյ կու-
սակցութեան, ևայլն ևայլն, ի Փ. Պ.
— Ինչո՞ւ կը բարկանաք «Հայելի»ին
դէմ, երբ ըստ իւր կոչման, ձեզի պէս
ազատաբար ունեցողները (ինչ կու-
սակցութեան որ պատկանած ըլլան) հա-
ւատարմաբար ցոյց կուտայ հանրութեան:
Հայելի չի կրնար իր մէջը նայող տգե-
ղը գեղեցկացնել կամ գեղեցիկը տգե-
ղացնել: Ազատ էք, ուղածնուդ չափմեր
թերթէն պատուեցէք. . . ձեր երեսին
մորթին պէս. ամենեւին հոգեւորնիս չէ.
մինակ կը ցաւինք որ, մանկաւոյն դաս-
տիարակութիւնը ձեզի պէս պնակալեղ
սկըթուածի մը յանձնուած է:

«Հայելի»ի Ա. տարւոյ 50 թիւերը
մաքուր կազմեալ կը վաճառին, գին 10 ֆրք:



ՍԻՐԱՀԱՐԱԿԱՆ

Անցեալ իրիկուն, ուշ առտն, տե-
ղացի պարօն մը և օրիորդ մը փողոցի
դրանը առջև կեցած կը խօսակցէին.

— Մօրու Մայրամ, հաշան տիւն ագ-
շամ գըզգարաւորն եանընտաքի գօժու կի-
լինէ կիտէյօրտու, պահէնին իշինէ պիր քիւ-
չիւք մէքթուպ ֆըյտըրտըմ, սէն կէօրմէ-
տին մի.

— Հը. . . պայաա, սանքի կէօրտիւմ
տէ տլմատըմ, հէ. . . է պէն օգատար բա-
քի՞ն միյիմ. սէնի հաշան կէօրիւրիմ, նա՞սըլ
տայանըպ տա իչէրտէ օթուրայլմ. գըզգար-
տաշըմ կիլինէ հէր վագըթ «Հոռուիկի կի-
լինէ կիտէճէմ» տէրիմ, վէ հայտէ սէնին
արգանտան կէլիպ իսլահ իսլահ գօնուշմագ
մըյըլ:

— Է՛հ, պէնի գանտըրմագ իսթէյօր-
սըն, պայաա, պէն էօյլէ լաֆլարա գանտ-
յըմ մը, օնուշտան կէչէն ագշամ էօթէթի
մաալէտէ Ակուշ կիլինտէ չօճուգլարլան եա-
երլմըզ գալագալմըշտըն, հաշան իշէրի կիր-
տիմ, նէ՞ իշին իրէնկիին սըրըթտըն:

— Օնտան աննա քի, հաշան երկիւնի
կէօրտիւմ, սէվտանտան իրէնկիմի տթտըմ:

— Պայաա:

— Ը՛հ, կապիչ պիրէ, հիշիճիք ինա՞ն-
մայօրսըն պանա, հէփիճիին սանա սէօյլէյօ-
րում ամա, պէն օնուշտան իսլահ գըզ օլ-
մայօրում:

— Պայաա, պէն էօյլէ շէյլէրէ հիշի-
ճիք գանմամ:

— Ամա նա՞սըլ սէօլէիմ քի գանտսըն,
իյի ագլըմա կէլտի, Զատիք իշին սանա տէ-
տիմ քի պիր գութու փուտրա ա՛լ պանա.
սէն գուլագ ասմատըն, եօդ զարարը:

— Պայտա, պիր գութու բուրտանըն լաֆը՝ մը օլուր :

— Հէլպէթտէ, պիր ատամը պունուն կիպի բիւշիւճիք շէյլէրտէն տէնէրլէր :

— Ապէ սէն պիլիրսին քի սէնին իշին պէն էօլիւրիւմ կալիպաեա, նէճին եիւրէմի փարալայօրսուն :

— Աման, պիրի կէլիյօր, շուրաճըք-տան ոռսուլլայըն սիվիշի վէր :

— Նէ՞ իշիմէ կերէք . պիր ատամ Տիւ ճանընտան այրլը՞ր մը . կիտէյիմ քի օ տա տէսին քի պա՞գ փափինլէտի տէ գօշտու :

Այս միջոցին օրիորդին եղբայրը որ շուկաէն կը վերադառնար, անոնց ձօտենալով՝ ապտակ մը կիջեցնէ պարոնին երեսին . — Սէնի կիտի ութանսազ, Տօլան սէն գա՞ջ ետա՞ շընտա ուշագ սըն քի . . .

— Ուրմա պէ՞, նէ՞ ուրոյօրսըն, պէն սանա եարըն զաքօնճասընա հատտինտէն կէլիրիմ :

— Տէֆ օլ շուրատան, ետմըգ աղըշը . (բրոջը) սէն տէ շրֆնթը եալագ, ութանմա-տան պիր ուշագլան քօրթէ եաբարսըն հէ՞ .

— Պէնիմ Տիւշիք հապէրիմ եօգտը, օ կէլմիշ պանա լաֆ գաթըյօրտը :

— Սո՛ւս ութանմազ եալաք, պիրտէ տուրմուշըն լաֆ էտէյօրսըն . պօլունու պիւլիւթ մէտէն հոյունու պիւլիւթիյօրսըն .

Դրացի Պուլկար կին մը . — Է՛հ պիրէ եթէք, արթըճաճըգ պրա՞գ գըզանը . էլվէ-րիր, պիլ տաճա պէյլէ պի շէյ եարմամագ իշին գուլընա քիւրէ օլտու : Գըզ մօրու, սիզտէ սօգագ գաբըսընտա գօրթէ եարմայըն քի պէյլէճէ ագշամ գալվալթըսընը տատա-տըրթմասընլար սիզէ :

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

Տըթթօրուն պիրի՝ խասթանըն պաշընտա օթուրմուշ, զայէթ քէտէրլի կէօրիւնիյօր իտի :

Խասթա սահիպի՝ հէքիմին պու հալինէ պագարագ տէտի քի .

— Նէ՞ օ, միւսիւ տօգթօր, բէք մէ-

րագը կէօրիւնիյօրսընը :

— Էվվէթ, չիւնքիւ արթըգ պիգիմ ի-շիմիլ գալմատը :

— Նա՞ւըլ . իշինիլ գոյմա՞տը . էօլէճէ՞ք մի . . .

— Խայըր, էօլէճէք տէյիլ, սաղըլաճագ :

Իբի քէյլիւ արտսընտա պիր միւճատէլի զուհուր էտիպ, պիրի՝ տիկերինէ միւքէմէլ պիր թօգաթ աշգ էտէր :

Հէրիֆին եիւզիւ շիշմէյէ պաշլատըղըն-տան, պաշընը սալլատեարագ տէր քի .

— Պու պէյլէ կէշմէյէճէք, սիզէ կէօս-թէրէճէիմ :

Թօգաթը վուրան իսէ Փիւթուսըղճա— Հէլպէթտէ պէյլէ կէշմէյ, շիշէն եիւզիւնի-զէ Լաբա գօյմալըսընը :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԻՐԱԿԱՆ ԴԷՊԵՐ

Ա. Փիլիկ աղբօր հարսնիքը .

Բ. Թապլաքեար վարժապետը .

Գ. Խաբուած Ակնցին .

Ընթերցատէրներու փափագին հա-մաճայն սոյն երեք ծիծաղաշարժ գէպ-քերու հաւաքածոն, որ աւելի քան 200 էջերէ պիտի բաղկանայ, արդէն մամ-լոյ յանձնուած ըլլալով, բաժանորդա-գրութիւն մը բացուած է : Դիննէ 1½ ֆրանք : Հրատարակութիւնը ամբողջա-նալէ ետքը պիտի վաճառի 2 ֆրանքի :

Այս տութիւ շրջաբերութեան հան-ուած բաժնետոմսը յառաջիկայ Մա-յիս 1 ին Վառնաի մէջ «Հայելի»ի խում-բագրութեան, իսկ գաւառները անոր Պատ գործակալներուն ներկայացնողը պիտի ստանայ սոյն գրքէն մէկ օրինակ կազմեալ :



ԳՈՒՀԱԿ
ԱՊԱԳԱՅԻ
Կամ Զուարճալի Բաղդադոյց
Ընտանեկան

Երկսեռ ամեն հասակի ընթերցողաց ըզ-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով,
գիմել մեր խմբագրութեան:

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ

ԱՌԹԻՍԹԻԲ

Գ.Դ.Թ. Թաղ Թիւ 213 Վառնա

Լուսանկարչատանս մէջ մեծ խնամքով կը
պատրաստուին ամեն ապսպրանք. թաշկինա-
կի, այցաքարտի, ապակիի, տախտակի և
մարմարեանի վրայ գեղեցիկ և բնական լու-
սանկարներ, ակրանտիսմաններ, մինիաթիւ-
ներ գունաւոր պատկերներ և այլն:

Երկու երկվեցեակէ աւելի ապսպրողներ
իրենց պատկերներն թաշկինակի վրայ լու-
սանկարուած նուէր կընդունին:

Փափաքողներու մասնաւոր գասեր կը տըր-
ուին:

Որոշեալ գնոյն կեսը իբր կանխավճար չ'առ-
նուած ոչ մէկ ապսպրանք կը պատրաստուի:

ԳԻՆ ԽԻՍՏ ԶԱՓԱԽՈՐ

4

Վ. Բիւշիւքիեան

ՆՈՐ ՀՐԱՏԱՐ ԿՈՒԹԻՒՆ

ԼՐԲԷՅԻՆ ՖԷՆՏԻ

ԳԱՐԸՅԸ ԵՒՆՏԻ

Գըչ կէճէլէրինէ մախսուս զայէթ կիւ-
իւնճի վէ էյլէնճէլի իշպու գօմէտի 32 սա-
հիֆէտէն իպարէթ օլուպ, հրուֆաթը էրմէ-
նճէ իվէ լիսանը թիւրքճէ օլարագ Վարնա

Թիւթիւնճիւ տիւքքեանլարընտա 30 սանթիմ
ֆիաթլէ սաթըլմագտա տըր: Թաշարարտան
իսթէյէնլէր հալընը 30 սանթիմլիք բօսթա
բուլը զիրտէ մուհարրէր նամըլա կէօնտէր-
մէլի տիրէր:

Մ. ԽԱԶԻԿԵԱՆ, 2 նճի Ուշասթ, 1104

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Պուռտան պէօյլէ սաիր էյլէնճէլի վէ ֆա-
խէլի գօմէտիլէր տախի բէյտէրբէյ, նէշր օ-
լունաճաղը պէյան օլունըր:

Վայրկենական Տպագրութիւն

ԱՅՑԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր. ի կը ապագրուի և ա-
մօր տուիին մէջ կը գտնուի Այցեւորման գոր-
նածուծեան հրահանգը պարունակոր տէտրակ
ծը, որուն կողքին վրայ այցեւորման տիրոջ ա-
նունը ապագրուած պիտի ըլլայ: Գիմել խմբա-
տրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանթիմ-
յաւձնարարողին վրայ է: Գրամի փոխարէ-
պուլկարական 5, 10 եւ 15 սանթիմնոց նա-
մակադրօշմ կ'ընդունուի: Կանխիկ:

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

ԿԱՄ

ԴԱՍՍԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԷՏՍ

ՓՈԲԻՆՅ ՏՂԱՅՈՑ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առա-
ջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով,
կը պարունակէ մանկական զուարճալի երգեր
ու քանի մը ոտանաւոր առակներ եւ կրնայ
երախայներուն ծառայել նաեւ իբր ընթեր-
ցանութեան գիրք որուն պարունակութիւնը
երօտեցուցիչ եւ հրահանգիչ է միանգամայն
անոնց համար:

Թուղթը ընտիր է, ապագրութիւնը մա-
քուր եւ կազմը վայելուչ:

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արեւիկեան տպարան,

Չրդ. Թաղ, Թիւ 1104:

Отговорень редакторъ: Н. Драгулев

Печатница "Взаимность" — Варна.